

լուն համար :

Չատ նախանձորդներ ունեցաւ Փեթրարքա աս պատու՞յն համար . բայց շատ մեծամեծ թագաւորներ ալիրենց քովը կը հրաւիրէին զինքը , մեծամեծ պատիւներ տալով իրեն : Փեթրարքա գնաց Փարմա քաղաքը , և հոն եկեղեցւոյ պաշտօնեայ էր . բայց 1348^{ին} լսելով լ աւրայի մահը՝ սաստիկ տրտմութէն Խտալիայի այլ լայլ քաղաքները պտըտելէն ետքը գնաց նստաւ Փատուա քաղաքը , ու հոն կանոնիկոսութեան պատիւը ունեցաւ : Վաղաքէն գուրս Արքուա ըսուած գեղը քաշուեցաւ , ու հոն բանաստեղծութեան ետեւէ էր , բայց շատ մարդիկ հոն ալ իրեն տեսութի կ'երթային :

Ֆիորենցայի բնակիչքը , որ Փեթրարքայի ծնողքը քաղաքէն գուրս քշեր էին , հաշտուիլուզելով Փեթրարքային հետ՝ Պոքաչչիոյ բանասէրը խաւրեցին որ զինքը հրաւիրէ . Փեթրարքա թէպէտ շատ ուրախացաւ աս հրաւերքին վրայ , բայց իր զուարժալի բնակութիւնն ալթողուլ չէր ուզեր . ու երբոր ինքն ալ տարակուսեր էր որ երթայ թէ չէ , յանկարծակի մեռած գտան զինքը իր գրատանը մէջ աթոռին վրայ նստած 1374^{ին} , որ ան ատենը 70 տարուան էր : Փառաւոր հանդիսով թաղեցին զինքը նոյն գեղին եկեղեցւոյն դիմացը . գերեզմանին վրայ ալ Փեթրարքայի բերնէն այսպիսի տապանագիր մը գրեցին . “ Աստ գտի զհանգիստ իմ . ողջամբ մնասնիք Քոյս և Քաջողութիւն կենցաղս . չիք ինչ այսուհետեւ իմ և ձեր . մնայ արդ ձեզ և զայլս պատրելլ . Խտքը գերեզմանին վրայի քարը վերուցին ու վրան փառաւոր շիրիմ մը շինեցին , ու մէկ կողմը լատիներէն ուրիշ տապանագիր մը գրեցին : Չատ օտարականներ Փատուա քաղաքը որ կ'երթան , Փեթրարքայի գերեզմանին ալ այցելութիւն մը կ'ընեն :

Փեթրարքա սակաւակեր էր , վար-

քը և բարքը ընդհանրապէս բարեկարգ . ինքը բանաստեղծական ուսմաննորոգիչը ըսութեցաւ , ունաւե Հայր իտալական բանաստեղծութեն . ինքը դարձեալ սկսաւ հնութեանց ետեւէ ըլլալ , ու իրեն նայելով Գաղղիացիք և Խտալացիք ալ ետեւէ եղան հին յիշատակներու : Փեթրարքա պատմական գրուածոց մէջ ամենէն երևելիները տաղերն են , թէ իմաստի և թէ ոչոյն կողմանէ :

Բայց մեծ պարծանքը իրեն բանաստեղծութիւններն են , մանաւանդիտալերէնները , որով շատ ծաղկեցուց Խտալացւոց լեզուն . իսկ իրեն գրուածոցը մէջ ամենէն երևելիները տաղերն են , թէ իմաստի և թէ ոչոյն կողմանէ :

Ո՞իայն թէ իր բոլոր գրուածքներուն մէջ ալ կը գտնուին պաղ այլաբանութիւններ ու բառերու խաղեր , որ ասոնք ան ատենուան գրուածոց ընդհանուր պակասութիւններն են :

ԱԶԳԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Քաղական բնիկ հնչման հայիական դառից :

ՕՌ օրինակ զանցս և զպատմութիւն ազգաց իւրաքանչիւր 'ի նոցունց անտի աւանդիցն կամ'ի դպրութեանց արժան է ստուգել և ուսանել , և ոչ յօտարաց և 'ի հեռաւորաց , զի ամենայն ոք իւրումն հմտագոյն է քան օտարուացն , նոյնպէս և զլե-

1 Պարոն Պրուս կրտսերն համբաւեալ գաղղիացի , կաճառորդ և գրապետ կայսերական հեմարանին ֆեթրապուրկոյ յայց ելեալ մերոյ մենաստանիս սրբոյն Ղաղարու 'ի Ալենետիկյամնեանն օգոստոսի , և յաղագս իւրոյ հմոռութեանն 'ի Վրաց և 'ի Հայոց պատմութեան և 'ի դպրութիւնս , և սակս ազնուական բարուցն յօդացեալ մերումն Հայկաղնեան Շեմարանի , խնդրեաց 'ի մէնջ բանիւ , ապա և գրով , զլուծումն իւրոց տարակուսանացյազագս բնիկ հնչման մերոյս բարբառոյ . և մէք մտագիւր յօժարութեամբ ձեռն արկեալ 'ի նոյն , հարկ համարեցաք 'ի գրոցն մեր բարբառ առաջի առնել զիրսն համառօտիւ . զի այն իսկ դիրիմաց ևս է Եւրոպացւոցն հայագիտացքան զաշխարհիկն մեր լեզու :

զուի և զբարբառոյ զբնիկ առողանութիւն ոչ յօտար շըմանց պարտ է ժողովել, այլ յազգային հագագէ և 'ի վերծանութէ : Ապաքէն յայս սակս իսկ խոստովանեալ է արդ յամենայն իմաստնոց Եւրոպայ և 'ի լեզուագիտաց՝ եթէ 'ի զուր է լատինացւոց խանգարս անուանել զհնմունս ինչ տառիցն Յունաց մերոյ ժամանակիս 'ի նոցին լեզու, և վայրապար ջան և անտեղի՝ զոր գործենն, ոչ միայն ինքեանց այլազգ առոգանել, այլ և բուռն առնել նոցին իսկ Հելլենաց՝ զի թողեալ լրեալ զոր ուսանն անյեղի սովորութեամբ որդի 'ի հօրէ՝ զիւրեանցն ընկալցին զառոգանութէ, և հաւանեսցին 'ի պատճառաբանութիւն որք ոչ սակաւ կրեն հակառակութիւն . քանզի կամին զի արդի Հելլենքս փոխանակ ու (Ա) հնչելոյ զիւրեանցն թ կմթիւ, հնչեսցեն եւ կամ beta (պէ, պէնտ) . սոյնպէս մի ասասցեն ցննութիւն (հենիստու), այլ genesis (Ճենէլլի) . ոչ ալկիթիածոց (ալիքիատիւ), այլ alcibiades (ալիքիատիւ), և այլք անթիւք : Եւ թուի իմն թէ չխորհիցին որք զայնիկամին՝ եթէ առ հելլենական ազգին է խնդրել զծչքրտագոյն առոգանութեան տառից նոցին գէթ զնշխարս, և ոչ յիւրեանց շըմթուննել 'ի մատեանս՝ որ այնչափ հեռի են 'ի Յունաց տեղեաւ և ժամանակաւ և բարուք և սովորութեամբք : Աւանիկ և նոքին իսկ լատինք կամ Հռովմայեցիք նախանձաւոր յարուցեալք հռովմէական առոգանութենն առ իւրեանս մնալոյ իբր անկորուստ ժառանգութիւն հայրենի, բացէ 'ի բաց մերժեն և դատապարտ առնեն զպահանջանս Դերմանացւոցն և Աաշառաց, որք պարծին վարդապետել Հռովմայեցւոց զնոցին լեզու և զառոգանութիւն, իբր զի սոքա զլիկերոնին անուն (Cicero) շէշէո պարտ է ասեն վերծանել և ոչ չիշէրո . ըստ նմին և (genealogia) հենէալոհիտ ընթեռնուն, և ոչ ճենէալոթէ : Դիիւրագոյն ևս է հերքել նոցա զՊաղղիացւոց ո-

մանց յամառութիւն, որք պնդեն թէ և ոչ մի 'ի դոցանէ ստոյգ հռովմէական իցէ հնչումն, այլ արժան է ասեն սիսեած ասել և ժէնէալոթէ : Եւ ո՞ք ոչ տեսանիցէ եթէ քանի անհիմն է օտարացս այսոցիկ՝ Դերմանացւոցդ ասեմ և Պաղղիացւոց՝ վարկած և պահանջանք, եթէ այսպէս արժան իցէ կոչել, ուր սոքա 'ի բարդաւաճագոյն ժամանակս Հռուսումոցն պետութեան խժդժութքն և թիւրեանց ծանուցեալք էին նոցա, և այժմ ևս ոչ այլազգ հմտացեալք գտանին Հռովմայեցւոցն լեզուի և պատմութենքայց միայն յանխօս և յանբարբառ գրուածոց նոցին մինչեւ առ մեզ հասելոց :

Դիթէ Ճշմարիտ իցէ հանրականս այս տեսութիւն, և ամենայն արդարասէր մտաց անժխտելի, որպէս և է իսկ, ապա և այն Ճշմարիտ է, եթէ և զհայկական բարբառոյս մերոյ զառոգանութիւն 'ի մերմէ ազգես պարտ է մեզ ուսանել և ոչ յօտարաց : Եւ իցէ ոք որ երկմտիցէ ընդ այս : — Դրդարե և ոչ ոք, բայց միայն 'ի սակաւուց ոմանց, որոց եղեալ է այնպէս 'ի մաի 'եթէ ազգս մեր հանդերձ իւրով քաղաքական պետութեամբն և այլովք ևս պարծանօք՝ կորուսեալիցէ բոլորովին և զբարբառոյ նախնեացն իւրոց զանսայթաքն առոգանութիւն : Եւ զայս ուստի առնուցուն և կամիւ հաստատիցեն : Իբանից օտարազգեաց ոմանց, որ թէպէտ և յիւրեանց 'ի բնիկ լեզուսն հմտագոյնք՝ 'ի մերումն թերուսք են ամենեին և թերահմուտք, որպէս և մեք արդեօք 'ի նոցայսն : Այսպիսիք ոմանք են հոլանտացին Ը ըստէր, անդղիացիքն Ա իսթօնեանք, բրուսիացին Փիթերմանն և այլք ոչ բազումք : Վանզի պնդեն սոքա, եթէ կորուսեալ են Հայք զբնիկ առոգանութիւն տառիցս բ, գ, դ, է, չ, լ, մ, յ, պ, ջ, ա, ՛ . և թէ պարտ իցէ ըստաց նովին կարգաւ զայսոսիկ հնչմունս փոխանակել.

պ, է, ա, չ, գ, ծ, լ, ջ, է, բ, դ, ի :
Եւ ոչ տեսանիցէ , զի ամենեին իսկ
այլանդակի և յեղափոխի այսու հըն-
չումն բարեառոյս մերոյ :

Իսկ պատճառք որովք զկարծիս
իւրեանց կամին հաստատել այսօքիկ
են , հաւաքեալք՝ ի բազմահմուտ լե-
զուագիտէն Փեթերմաննէ յիւրում
քերականութեանն :

Ա , Օի նախնի Հոյնք և Հոռվ-
մայեցիք զհայկական անուանս այս-
պէս փոխաբերեն յիւրեանց լեզուս .
օրինակ իմն զմերն Տրտառ նոքա դէրե-
տարիս կամ դէրետէս ընթեռնուն ,
զի՞ագարադին պահարադ , զՏէրիսն դէ-
րիս , և այն :

Բ , Օի նախնի Հայք ևս զյոյն և
զլատին բաւս նովին կանոնիւ ՚ի հայ
փոխեն , որ տառադարձութիւն կոչի
յարդեացս . զոր օրինակ բարբարոս ա-
սեն , և ոչ կարչարոս կամ պարպարոս ,
Դրէգրիս և ոչ էրէրիս , Դիոսէրոս և
ոչ տիոսգուրոս , Պ ոնդինոս , և ոչ լոնինոս ,
Լիւար և ոչ գէսար կամ չեղար , Պոբդիս և
ոչ բուպշոս , Պիտրոս և ոչ բէրրոս
և այն :

Գ , Օի նոյն կարգ է գոգցես այ-
բուբենից Հայոց , որ ինչ և Հու-
նացն . ապա և զնոյն հնչմունս պար-
տին ասեն ունել հայեցի տառք՝ զոր
յունականքն ունին :

Դ , Օի բաժանումն տառիցն Հայոց
՚ի հայ թարգմանութեանն Վար-
կանութեան ՚ի փոնեսիոսի թրակա-
ցւոյ՝ զնոյն թուի հաստատել :

Եայս ամենայն պատճառքնոցա որ-
չափ և զօրաւորք կարծիցին ՚ի վերին
երեսս , սակայն ՚ի փորձ և ՚ի քնին մա-
տուցեալք տկարանան յոյժ յոյժ , և
ինքնին գոգցես անյայտին : Ա ամս ո-
րոյ հարկ է աստանօր զմերն նախ հաս-
տատել եթէ մեք զոր ունիցիմք կար-
ծիս զառոգանութէ տառիցն մերոց , և
որպէս հաւաստիցեմք զայն . զոր թէ
յաջողեսցուք կատարել , այնուհետեւ
դիւրագոյնս հերքեսցուք և զհակա-
ռակորդացն զպատճառս :

Եթէ յանցանել բազմադարեան

ժամանակաց բազում փոփոխութիք
գործիցին որպէս յայլամենայն հան-
գամանս՝ նոյն և ՚ի լեզուս ազգաց իւ-
րաքանչիւր , ընդ այն չեն ինչ զար-
մանք . քանզի և լեզու , մանաւանդ
որ անգիրն իցէ , ըստ փոփոխել գի-
պաց բախտին և տեղւոյ և քաղաքա-
կանութեան և գիտութէ կամ տգի-
տութեան՝ բնաւորեալ է բազում այ-
լափոխ կերպարանս զգենուլ , մինչեւ
հազիւթէ կարողասցի ոք զնախնա-
կանն տիպ նշմարել ՚ի նմա : Վա-
ջայայտ է յոյժ Ճմարտութիւնս , և
այնչափ՝ զի թէպէտ և ոչ աստուածա-
սաստ պատուհասիւ խառնակէր նա-
խաստեղծիցն բարբառ ՚ի Բարել ,
(որ անշուշտ ոչ սակաւ այլափոխեալ
էր և ՚ի ժամանակին յայնմիկյառաջ-
նոյ անտի պարզութենէն ,) սակայն
յետ այսքանեաց դարուց ՚ի վերայ ան-
ցանելոյ հարկաւ առնոյր զանազա-
նեալ կերպարանս , մինչեւ բնաւ իսկ
չիմանալ ազգաց ազգաց զիսօս իրե-
րաց : Բնդ այս չեն ինչ ասեմ զարմանք.
բայց այն էր զարմանալոյ և հիացման
արժանի , եթէ ազգ մի և ժողովուրդ
ոչ փոքր , և ոչ փոքու Ճոխացեալ մա-
տենագրութեամբ , որպիսի մերս է ,
յընթացս դարուց քսանից երբէք ոչ
թափուր մնացեալ յուսումնասէր և
յընթերցասէր մարդկանէ , կորու-
սեալիցէ բնաւ ամենեին զիւրոյ բար-
բառոյն զբնիկ առոգանութիւն և զտա-
ռիցն իւրոց զՃզրիտ հնչումն : Իցեն
արդեօք յազգի անդ կամ յաշխարհի
տոհմք և գաւառոք և հատուածք , որ
փոքր մի այլազգ առոգանիցեն զբար-
բառն յընթեռնուլ անդ զգիրս , և ոչ
ըստ հասարակաց սովորութեան . սա-
կայն որ բունքն են աշխարհին և բազ-
մագոյնք ևս թուովլ , հարկ է թէ պա-
հեալիցեն զՃզրիտն առոգանութիւն
թէպէտ և դոյզն ինչ փոփոխութեամբ
հանդերձ : Ո այս հաստատեն և օրի-
նակին յայլոց ազգաց զորս ՚ի սկզբան
աստ բանիցս ածաք ՚ի մէջ . զսոյն և
ընդարառյան բնաւորութիւն մերոյ ազ-
գիս առանձինն ցուցանէ , անսիրելու-

թիւնն ասեմ փոփոխութեանց և նորաձեւութեանց, և երկիւղած պահպանութիւն հայրենականացն աւանդից :

(Օ) այս ամենայն զմտաւ ածեալ, ասել ասեմք և մեք՝ եթէ հատուածք ազգիս մերոյ տարաշնարհիկ՝ ի բուն հայրենեացն եղեալք մինչեւ ի հընդիկս և 'ի Պիռնտոս, 'ի Որուսիա և 'ի Ամածառս, 'ի Որլտաւիա և 'ի Ամակեդոնիա, թերեւս կորուսեալ իցեն զբուն հնչմունս տառից ինչ բարբառոյն իւրեանց, և կամ փոքր մի խանգարեալ զնոսին. բայց և ոչ նոքա զամենայնն : Եւ այս ոչ միայն 'ի խօսից նոցին յայտնապէս երեի, այլ մանաւանդ յընթերցուածոյն և 'ի հագագէ և յոլորակաց վերծանութեանն . մինչեւ համարձակիմք իսկ ասել, զի թէ կայ ինչ խտիր ընդ գաղթելոցս այսոցիկ առոգանուի և ընդ բուն հայաստանեայցն 'ի միջի, ոչ այնչափ 'ի բաղաձայնիցն հնչման է այն խտիր, որչափ 'ի ձայնաւորացն առոգանութե . քանզի յաձախ սովորութք զտառս հնչեն օ, զէ իբրու է, զյ սկզբնական իբրու հ . ուր հայաստանեայք բարւոք յոյժանազանեն զնմանաձայն տառսդ 'ի միմեանց : Եւս առաւելանկորուստ համարիմք զառոգանուի բաղաձայն և ձայնաւոր տառից լեզուիս մերոյ 'ի բերանս բնիկ հայաստանեայց, այսինքն որոց բնակեալ են 'ի Ամասեաց ոտանէ մինչեւ 'ի Լարին և 'ի Ուուշ, 'ի Ա ան և 'ի Ամիջապետս և 'ի Լիլիկիա . որոց թէ պէտ և ըստ գաւառաց գաւառաց զանազանք իցեն յեղանակք խօսից, սակայն հնչումն տառից մերոց գոգցես նոյն է 'ի շրթունս ամենեցուն : Եւ ահա այն է, որպէս մեքս հաստատեմք, բնիկ հնչումն լեզուիս մերոյ . այսինքն զի տառքս բ, գ, դ, ռ, չ, և ջ միջակք են և խտրին յոյժ 'ի նմանաձայն կարծեցեալ տառիցս դ և պ, ժ և կ, թ և ա, ծ և ց, ճ և զ . թող զհնչմունս ձայնաւորացս և է, զորս հնչեն ձշութեամք մեծաւ . որպէս և զյ ըստ տեղոյն՝ նուրբ և թաւ, և զւ և զի :

Իակ այն զի 'ի գաւառուս ուրեք սահմանաց աշխարհին մերոյ և 'ի հատուածս գաղթականաց ոմանց հայկազնեայց ոչ այսպէս հնչին տառք մեր, այլ ուրեք 'ի մին և ուրեք 'ի միւսն խոտորին ծայրայեղառոգանութիւն, այն չէ ինչ . մանաւանդ թէ այն իսկ 'ի հաստատութիւն գայ մերոց փաստիցս, եթէ հայաստանեայցն այնոցիկ միջակ առոգանութիւն՝ որ հեռի է յերկուց ծայրից աստի, հարազատագոյն է և ընտրելագոյն, և ոչ ինչ, կամ թէ քաջ սակաւ ինչ ընդհատ 'ի նախնեացն մերոց առոգանութենէ :

(Ա) արդ մատչել 'ի լուծումն տարակաւսանաց որ 'ի կանոնաց անտի տառադարձութեան ծնանին . այս է եթէ զի 'ի զի նախնի հելենք զմերն պ, օրինակ իմն, τ (τ) թարգմանեն, և ոչ δ (δ) . զր δ, և ոչ τ . զր γ (γ) և ոչ ς (ς), զբ β (Ակամպ) և ոչ π (π) և զայլսն ըստ կարգի : Եւ ընդեր մերքն ևս նախնիք զյոյն բառս և զանուանս սովորին կանոնաւ 'ի մեզ փոխաբերեն, և ոչ այլազգ . և զայրութենս մեր ևս ըստ Յունաց ալիաբետացն կարգեալ և յարմարեալ են անդըստին 'ի սկզբանէ :

(Ա) միայն պատճառք իրացս խընդիրի են յազգային 'ի սեպհական առոգանութեն բնիկ հայաստանեայց, որ արդարե զարմանալի ինչ է յաչս բոլորից, ոչ օտարաց և եթէ, այլ և հայկազն եղանակը 'ի զանազան աշխարհս արտաքոյ հայրենեաց : Բանզի եթէ ոք քաջ միտ գնիցէ, բնատուրն այն ազգիս մերոյ յաջողակութիւն յուսանել և յառոգանել ձշգրատիւ զայլալեզու հնչմունս', ոչ ինչ հաւաստեաւ նշմարի 'ի բնիկ հայաստանեայս, այլ 'ի ցրուեալսն ընդ օտարապտեղօք . որոց արդէն իսկ աղաւաղեալ գոլով սեպհականն այն հնչումն ազգային, և 'ի ստէպ լրոյ օտարոտի

1 Զորմէ արդ իսկ գովութեամք առնէր յիշատակութիւն համբաւեալ օրագիրն Գաղղիոյ Journal des Débats, 'ի 21 հունիսիրի :

բարբառոց որ շուրջ են զնոքօք՝ թե-
քեալ և ողորկեալ, յարմարագոյնք
դտանին՝ ի յօդել զնոսին շշգրտա-
գոյնս և ոչ ինչը ընդհատ յազգայնոց
անտի զորոց զլեզուսն ուսանին։ Այս-
պիսիք են որք՝ ի կոստանդնուպօլիս
պանդխտին հայք, և որք՝ ի Ուուս
և ի Եւհս և ի Վաճառս, և որք՝ ի
Պարսս և ի Ի իրս։ Խակ բնիկ հայա-
ստանեայք առ հասարակ դժուարու-
թիւն յոյժ կրեն՝ ի հնչել զօտարոտի
բառս. և զոր օրինակ դժուարին է
օտարաց իմանալ զխտիրսն փափիա-
ձայնս որովք քաջ զանազանեն մերքն
յաւոգանութեան անդ մերոյ բար-
բառոյս զի և զի և զո, զի և զի և զի,
զր և զի և զո, զծ և զի և զո, զո և
զի, զո և զո, զէ և զէ, զո և զէ, զծ և
զջ և զչ, սոյնպէս և սոցա մերոցս դը-
ժուարին յոյժ թուի՝ ի միտ առնուլ
զխտիրս նմանօրինակ տառիցդ յօտար
լեզուս, և ըստ այնմ առոգանել զնո-
սին։ Այսի ահա զարմանալին այն
այլափոխութիւն, որով բնիկ հայա-
ստանեայք զի կամ զի օտար ազգաց՝
հնչեն իբրու պ, և զի կամ զր նոցին
որպէս պ, և զի կամ զդ նոցին որպէս
է, և այլն. օրինակ իմն, զյունականն
սուրե (սէքէլ) հնչեն սպիտի, զլատինա-
կանն րոտա (քօւեա) հնչեն պրիտա,
զուուս բառս պաշորիս (քաշուեա) հըն-
չեն պաշտորիտ, և այլն։ Աիք ինչ երկ-
մտութիւն զի յերկար ջանիւ և վար-
ժութեամբ ոչ սակաւք՝ ի հայաստա-
նեայց ուղղեն զայս թերութիւն, այլ
նախկինն այն տպաւորութիւն օտար
հնչման՝ ի լսելիս նոցա՝ կայ և մնայ
զարմանալոյ արժանի. և ահա այս է
զոր ազգային և սեպհական հնչումն
համարիմք մեք բնիկ հայաստա-
նեայց։ Աւ ՚ի հաւաստիս այսմ վար-
կածի օրինակ առ ձեռն ունիմք և յայ-
լոց ազգաց ևս, ոչ յարելեայց միայն
այլ և յաւրոպացւոց. յորոց մին և եթ-
շատ գրեսցի։ Կերմանացւոցն ազգ
բազմաբիւր, որ ՚ի բունն Կերմանիա
և որ ՚ի սփիւռս յարոպայ, զամենայն
ազգաց զլեզուս որ շուրջ զնոքօք իցեն

՚ի հնչել իւրեանց փոփոխեն և այլա-
կերպեն բազմօք յոյժ առաւել քան
զմերազնեայմ, բայց նոյնպիսի իմն
յեղափոխութեամբ բաղաձայնից. և
թէպէտ ՚ի տղայ տիոց ևս հրաշան-
գեսցին յուսումն ստար լեզու աց, սա-
կայն յանհնարիցն է չիմանալ ՚ի խօ-
սից նոցա եթէ բնիկ Կերմանացիք
են. օրինակի աղագաւ, զգաղղիա-
կանն bon jour (պն ծուռ) կամ զիտա-
լացին եսոնցօրո (պն ծիօննօ) Կեր-
մանացին բոն շուռ հնչէ և բոն ջիօննօ.
զուուս բառս գոտին (կոստորին) հըն-
չեն գոստորին. փոխանակ ասելոյ ըստ
լատինացւոց veni, vidi, vici (Վնի,
Վնի, Վնի), ասեն Քնի, Քնի, Քնի,
կամ թէ քաջ Քնի և այլն։ Աւ չի-
մանան ևս դիւրաւ զխտիրն մեծ թէ
և ոք ուսուցանիցէ նոցա։
Ինդ այս եթէ հաւանեսցի ոք, ե-
թէ յանձին ունիցի ասեմխոստովան
լինել թէ զր ազգաց իւրաքանչիւր
սեպհական հնչմունք են, նոյնպէս
և մերս ազգ զիւրն ունի հնչումն,
ապաքէն ինքնին իսկ լուծեալ գտանէ
զամենայն զտարակուսանս որք՝ ՚ի փո-
խաբերութէ տառիցն մերոց ՚ի Յու-
նացն, և նոցայն ՚ի մերս՝ ծնանին։
Աւ յիրաւի։ Վանզի զինչ ինչ այ-
նուհետե խափան մեզ լինիցի կար-
ծել եթէ երանաշորհ թարգմանիցք
մեր զազգային զսեպհական հնչումն՝
զորմէ ՚ի վեր այսր ասացաք՝ կալեալ
անձանց կանոն և առաջնորդ, ըստ
այնմ յարմարեցին անսայթաք զդար-
ձուածս օտարոտի անուանց ՚ի մերս։
Աւ եթէ երբէք երբէք խոտորեցան
յայսմ կանոնէ առ հարկի ինչ քաղ-
ցրաձայնութեան կամ յայլմէ պատ-
շառէ բերեալք, այն չէ ինչ. օրինակ
իմն ՚առելի ասացին փոխանակ ասե-
լոյ ՚առելի (Ճաբիծ), ՚առելի ՚առ (Ventidius),
Յաբէն փոխանակ գրելոյ Յաբէն
(Առքէն)։ Ամին իրի և զայրութենիցն
մերոց զկարգ յարմարեցին ըստ հել-
լենացւոցն և ըստ յարայեցւոց ալ-
փաբետաց, և ոչ այլազգ։ Աւ այս

անտի ևս յայտ է, զի 'ի զանդիկ և 'ի պարսիկ բառիցն փոխաբերութեան ոչ այնչափ միտ դնեն այնմ ձգութեն . զոր օրինակ հովուտան հովուտ ուառ գրե լողիշէ ըստ հին և նոր Պարսից հնչելոյ, և ոչ հավերտան հովուտ ուառ . և այլք յզկնիսն Ա'ահետ գրեցին և ոչ Ա'ահետ, Ա'ահետ և ոչ Ա'ահետ :

Իսկ թէ նախնի հելլենք ևս զմերոյ բարբառոյս անուանս սոյնպիսեաւ իմն կանոնիւ փոխաբերեն յիւրեանցն՝ ընդ այն զի՞նչ զարմանք իցեն : Վանզի և զորոյ ազգի զՃշգրիտ հնչումն կարեին տալ անքատ և ցրաւոր ալփաբետիւքն իւրեանց, և լեզուածայր թոթով առոգանութեամբն : Ի՞շա և զՊարսից և զՊարթեաց զանուանս Ա'ահետ, Ա'ահետ, Ա'ահետ կամ Պիկրամ, Ա'ահետ կամ Ա'ահետ կամ Պիկրամ, Ա'ահետ կամ Պիկրամ և այլն, հնչեն և գրեն արթագույնութեան, արթագույն, արթագույն, իդասին, վլուգիսոս և այլն . և ո՛ոք մտաբերեսցէ սոցունց օրինակաւ զՊարսիցն ազգին ուղղել զառոգանութիւն : Վպա ուրեմն և ոչ զհայկական մեր հնչմունս փոխել արժան է՝ 'ի Քունացն հայելով ծեքաբանութիւնս . այլ զնոցայն եթէ իցէ հնար՝ մերովս ստոյգ և Ճշգրիտ առոգանութեամբ . յուղղութիւն ածել :

Օյս ամենայն հաստատէ անշուշտ և բաժանումն տառիցն մերոց 'ի հին քերականութեան, 'ի նուրբս կամ 'ի լերկս, 'ի միջակս և 'ի թաւս : Վանզի թարգմանիչն քերականութեան Կիոնեսիոսի թրակացոյ, որ բազում ուրեք զիելլեն կանոնս Ճգնի յարմարել և մերումս բարբառոյ, 'ի բաժանման անդ տառից հարկ համարի խոտորել 'ի հելլենականէն և ասէ . " Եւ են սոքա (բաղաձայնքս) նուրբք տասն և ստուարք ինն, և միջակք եւթն . և միջակք վասն այսորիկ անուանեցան (Քառ Շիր), զի քան զյոյրսն նուրբք են, և քան զնուրբքն յոյրք . . . և են միջակքն, բենն 'ի մէջ մենի, պէի և փիւրի . վամ զի քան զմեն և զպէ խաժ է,

" և քան զփիւրն բարակ . և գիմ 'ի մէջ կենի, քէի և խէի . զի քան զկենն թաւ է, և քան զին և զքէ լերկ . և դա 'ի մէջ տիւնի և թոյի . զի քան զտիւն թաւ է, և քան զթոյ լերկ, և այլն : Այս բանք պարզք և յստակք եթէ ունիցին ինչ պէտս մեկնութեան, լուիցուք աղէ Արզնկացւոյն, զի ասէ . " Բեն սակաւ ստուա, բագոյն է, զոր խաժ ասէ, քան զմեն և զպէ . իսկ քան զփիւր բարակ . բանդի մէն և պէ ասելով՝ հանդար . արէ իշանէն շմբունքն, և լոյլ և կախող հանէն բարբառ . իսկ բէն բախուն հանէ . ի վեն բախուն հանէ . ի վեն առուարագոյն : Բայց փիւր առաւել քան զթեն, որ չափ և նա առաւել քան զմեն և զպէ . վասն զի յանուանեն յիրեարս բախս զզրթունս . . . Ա'ահ չգիտեմք եթէ իւ ձեռնտու իցեն բանք հին քերականաց այնոցիկ՝ որ զթեն հնչել կամին իբր զպէ, և զգիմ իբր զկեն, և զայլն ըստ կարգի, զի աւանիկ և Արզնկացին ըստ մեզ դասաւորէ զաստիճանս հնչման չորեցունց տափաց այսպէս, Ֆ, Պ, Դ . և տես քանի Ճշգրտութեամք բացայատէ զմիտսն, զի ասէ բէն բախուն հանէ 'ի վենցն ուժգին և սպուարագոյն . յայտ ուրեմն է թէ մօտաւորագոյնս մերձենայ ըստ բնիկ հնչման 'ի թ լատինացւոց քան 'ի թ նոցին, թէպէտ և մեք զհնչումն թ տառին առաւել փիւրիւ յանդիման առնեմք, զի անքոյթ ևս զառոգանութիւն օտարուացն գործեցուք :

Դարձեալ և այլ իմն առարկուած հաւանին ոմանք ածել 'ի մէջ 'ի Ա բաց բարբառոյ . քանզի ասեն . ահաւանիկ և Ա բացն այբուբենք գոգցես ըստ մերոցն կարգի դասաւորեալք, բայց ոչ ըստ մերումս կանոնի հնչեն 'ի նոցունց, այլ որպէս տառագարձութեն պահանջել թուի կանոն . զի օրինակ իմն զբէծն բէծի գրեն և նոքա իւրեանց տառիւք, և հնչեն պէջի . զբորոտն (որ առ նոսա զշար նշանակէ) գրեն բորոտի և հնչեն պորմի . զմանդաշն գրեն ման-

Գալի, և հնչեն մակաւլի . զպշինքն սպի-
լինի գրեն, և հնչեն սիլինծի : — Այս
առարկուած՝ իբրու յազդակից և 'ի
դրացի բարբառոյ 'ի ներքս ածեալ՝
թերես ազդէր ինչ, եթէ ոչ նորին
իսկ լի իրք, և գոգցես ամենայն հայք
որ 'ի լի իրս գաղթեալք են՝ ոչ նոյնպէս
կամակորէին և զհնչմունս հայերէնին.
իսկ արդ հաւաստեաւ յայտ արարաք
մեք 'ի վեր անդր՝ եթէ խորթ է հըն-
չումն այն և անհարազատ, ապա և 'ի
հնչմանէն լի ըաց ոչ ինչ մարթի ոք առ-
նուլ փաստնոր 'ի ցոյց հակառակ կար-
ծեացն, այլ զոր 'ի քունացն և 'ի լա-
տինացւոց հնչմանէ :

Լպա ուրեմն բնիկ հնչումն մերոյ
լեզուիս՝ ոչ կոստանդնուպօլսեցեացն
է և ոչ լի ըաստանեայցն, որք երկա-
քանչիւր 'ի ծայրայեղն կան խոտոր-
ման յառոգանել զտառքս բ, գ, դ, չ
և այլն . զի առաջինքն հնչեն զսոսին
իբրու ժ, ժ, ն, շ, և այլք որպէս պ,
է, ա, ծ և այլն . այլ բնիկ հայաստա-
նեայցն, որ միջակ է ընդ երկոսեան,
և զամենայն զնշանակս հարազատու-
թեան յինքեան բերէ :

Հանկալի էր մեզ ձոխաբար պար-
զաբանութեամք տալ աստեն իբր 'ի
պատկերի զՃշգրիտ զայս հնչումն ըն-
տրելի . այլ քանզի յերկարագոյն բա-
նից և օրինակաց պէտք լինին առ այս,
նմին իրի առ 'ի հմտութիւն մերազ-
նեայց ոչ դանդաղեսցուք ուրոյն կար-
գել յօրագրիս հատուածս ինչ յաշ-
խարհիկ բարբառ զհնչմանէ այլեւայլ
տառից . իսկ սակս օտարազգի հայե-
րէնագիտաց դնեմք աւասիկ առ ժամա
զհամառօտ պատկեր հնչման մերոցս
այբուբենից՝ համեմատութք յոյն և
լատին գրելոյ .

ա	ա	ա
Բ	Բ	Բ
Կ	Կ	Կ
Դ	Դ	Դ
Ե	Ե, Է	Ե, Է (է առան .)
Զ	Զ	Զ, Տ (ԳԵՐԸ .)
Շ	Շ	Շ

շ	.	շ (ԳԵՐԸ .)
թ	թ, տ	թ, տ
ջ	.	ջ (ԳԵՐԸ .)
ի	ի	ի
լ	լ	լ
խ	խ	խ (ԳԵՐԸ .) kh
ծ	ծ	ծ (ԼԿՆ .)
չ	չ	չ (ԳԵՐԸ .)
հ	.	հ
չ	չ	չ (ԳԵՐԸ .)
զ	զ	զ (ԳԵՐԸ .)
գ	.	գ (ԳԵՐԸ .)
մ	մ	մ
ի	ի	ի, հ (ի առան .)
ն	ն	ն
շ	.	շ (ԳԵՐԸ .)
օ	օ	օ
չ	.	չ (tch ԳԵՐԸ .)
պ	.	պ
ջ	.	ջ (dch ԳԵՐԸ .)
ր	ր	ր
ս	ս	ս
վ	վ	վ
ծ	ծ	ծ
ր	ր, րշ	(ԼԿՆ .)
տ	տշ, զ	(ԳԵՐԸ .)
ս	ս, թ	յ, ն
պ	պ	պ
չ	չ	կ
օ	օ	օ
ֆ	ֆ	ֆ

ԲԱՐՈՑ ԱԿԱՆ

Տէլուին խելպին յաբմար պատասխան :

Այս նուվանի որ դեռ աշխարհ .
քիս պտըտիլը ու արեւուն անշարժ ըլ-
լալն լստուածաշնչին խօսքերուն դէմ
կը կարծուէր, գիտուն մարդուն մէկը
ամբաստանուեցաւ թէ մոլորական
բան կը սորվեցընէ ուրիշին : Դատա-
ւորը հարցուց ասոր թէ “ Ո՞ւս գի-
տեր որ Յեսու արեգակը կայնեցուց :
— Գիտեմ, ըսաւ փիլիսոփան . ահա
ան ատենէն 'ի վեր անշարժ կեցած է
արեւ : — Ատոր խօսք չունիմ,, ըսաւ
դատաւորը :